ԿՐՕՆԱ-ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ՅԱԿՈԲԵԱՆ
ԵՊՀ Փիլիսոփայութեան և հոգեբանութեան Ֆակուլտետի տեսական փիլիսոփայութեան և տրամաբանութեան ամբիոնի ասպիրանտ

ԿՐՕՆԻ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր. *կրօն, գիտութիւն, հակամարտութիւն, բախում, լեգիտիմութիւն։*

Keywords: *religion, science, conflict, clash, legitimacy.*

Հոգեւոր մշակութային բոլոր ձեւերը սերտ կապի մէջ են գտնւում միմեանց հետ։ Այս կապը կարող է արտայայտուել փոխադարձ կամ միակողմանի տարատեսակ ազդեցութիւնների ձեւերով. փոխլրացչութիւն՝ փաստարկման գործընթացում, հակամարտութիւն՝ հերքում կամ նսեմացում, սահմանների ճշգրտում, և այլն։

Այս իրողութիւններից հասարակական և քաղաքական ոլորտներում ամենասուրն արտայայտուել են մշակոյթի բոլոր ձեւերի փոխազդեցութիւնները կրօնի հետ. դրանք առկայ են եղել անյիշելի ժամանակներից, առկայ են և արդի աշխարհում. փոխադարձաբար միմեանցից օգտուում կամ միմեանց վրայ են հարձակւում (ի դէմս մշակութային տուեալ ձեւի ներկայացուցիչ-գործորդների) արուեստը և կրօնը, գեղարուեստական գրականութիւնը և կրօնը, փիլիսոփայութիւնը և կրօնը, և այլն։

Կրօնի[1] հետ ամենայաճախ «բախուող» *հոգեւոր մշակութային ձեւը գիտութիւնն է։ Այս բախումը եղել և մնում է խիստ վտանգաւոր. սրա հետեւանքով (և ընթացքում) խանգարւում է գիտութեան զարգացման բնականոն ընթացքը, խաթարւում է կրօնի մի շարք գործառնութիւնների իրացումը, իսկ հասարակական մակարդակում՝ բախման հանրայնացման պայմաններում, տեղի են ունենում հասարակական* «սալջարդներ (trauma)», *այսինքն (ի թիւս այլնի)՝ անվստահութեան յայտանիշ, մեղքի ու ամօթի խմբային զգացում, ինքնութեան ու լեգիտիմութեան ճգնաժամ, և այլն[2]։ Մատնանշուած խնդրի սրութիւնն աւելի ակնյայտ է դառնում, երբ հաշուի ենք առնում, որ համաշխարհային ԶԼՄ-ները լեցուն են կրօնա-աստուածաբանական բանավէճերով, որոնք հանդիսատեսների մօտ առաջացնում են ծայրայեղ հիասթափութիւններ, ագրեսիաներ, տագնապներ, կեանքի իմաստի կորուստ, և այլն։ Ուստի սոյն խնդիրը, լինելով զուտ տեսական, գործնականում վերաճում է հակամարտութիւնների և պատերազմների։*

Այսպիսով, խնդրի օրակարգայնութիւնն ակնյայտ է. վերը յիշատակուած հասարակական և անձնային վնասները հնարաւորինս չէզոքացնելը ու նոր վնասները կանխելը ենթադրում է խնդրի, առնուազն, տեսական լուծում։ Իսկ լուծումը

---

[1] Մեր համոզմամբ, ճշգրիտ իմաստով՝ կրօն կարող են համարուել միայն Մովսիսականութիւնը, Քրիստոնէութիւնը և Իսլամը։ Հոգեւոր մշակոյթի միւս այն ձեւերը, որոնք ընդունուած է համարել կրօն, կարծում ենք, չեն բաւարարում կրօն հայեցակարգի պահանջները, ուստի դրանք հաւատալիքների համակարգեր են, բայց ոչ կրօններ։

[2] Տե՛ս, **Штомпка П.**,Социальное Изменение Как Травма, Теория. Методология (Статья Первая) 2001г., էջ 11։

ենթադրում է բախման կամ, ընդհանրապէս, հակամարտութեան պատճառահետեւանքային կապերի, պայմանների և առիթների վերհանում: Սակայն հարցն այն չէ, թէ պատմական ի՞նչ իրադարձութիւնների արդիւնքում և պայմանների համընկնութեամբ են բախւում կրօնն ու գիտութիւնը, այլ այն, թէ որքանո՞վ է լեգիտիմ բանականօրէն հիմնաւորելի և արդարացնելի, կրօնի և գիտութեան հակամարտութիւնը (բախումը), եթէ այն ընդհանրապէս լեգիտիմ է: *Այսինքն՝ հարկաւոր է պարզել. արդեօք այս հակամարտութիւնն անհրաժեշտաբար բխո՞ւմ է կրօնի և գիտութեան էական յատկանիշներից, թէ՞ դրանց անհարկի վերագրւում են այնպիսի յատկանիշներ, որոնց միջոցով արհեստականօրէն կազմակերպւում է հակամարտութիւնը: Այսպիսի յատկանիշների առկայութեան դէպքում, կրօն-գիտութիւն հակամարտութիւնը կարելի կը լինի համարել լեգիտիմ, և ներկայումս լայն արծարծում ունեցող խնդիրը՝ կրօնը ճշմարտութիւն է հրամցնում, իսկ՝ գիտութիւնը կեղծիք (և հակառակը), վաւերական քաղաքացիութիւն կը ստանայ մտքի պատմութեան շրջանակներում: Իսկ եթէ պարզուի, որ կրօն-գիտութիւն հակամարտութիւնը լեգիտիմ չէ, ապա այս հակամարտութիւնից արտածվուող ցանկացած այլ խնդիր անհրաժեշտաբար պէտք է յայտարարուի՝ կեղծ:*

Ե՛ւ «կրօն»[3], *և՛* «գիտութիւն» *հասկացութիւնները ժամանակի մէջ ենթարկուել են մեծ փոփոխութիւնների: Սրանցից և ոչ մէկն իր ծագման սկզբնական շրջանում չի կիրառուել այն իմաստով, որով կիրառւում է ներկայում. ո՛չ Հին, ո՛չ Նոր Կտակարաններում և ո՛չ էլ Ղուրանում ու հադիթներում*[4] *չի օգտագործւում* «կրօն» *հասկացութիւնը: Մովսիսականութեան և / կամ Յուդայականութեան շրջանակներում* «կրօն»-*ի փոխարէն կիրառւում է* «հալախահ (הֲלָכָה-halakhah)» *հայեցակէտը, որը սկզբնական շրջանում առաւելապէս նշանակում էր ինչ-որ բան անելու ճշմարիտ ճանապարհ. մի հայեցակէտ, որ Աստուածաշնչի հայերէն (գրաբար և աշխարհաբար) տեքստ է փոխանցուել* «ճանապարհ» *հասկացութեամբ.* «...ցուցցես դոցա ճանապարհս յորս գնայցեն, և զգործս զոր գործիցեն» (Ելք ԺԸ:20)[5]: *Յետագայում այս* «հալախահ»-*ը կիրաառուեց* «...յուդայականութեան ամբողջ համակարգի վերաբերեալ»[6]:

Նորկտակարանեան (գրաբար և աշխարհաբար) հայերէն տեքստերում հանդիպող «կրօն» *բառը հին յունարէն բնագրերում, որպէս այդպիսին, բացակայում է: Բնագրում կիրառւում է* «թռեսկեյա (θρησκεία - threskeia)»[7] *հասկացութիւնը, որը հայալեզու տեքստ է փոխանցւում* «կրօն», «պաշտամունք», *և այլ նմանատիպ հասկացութիւններով.* «...զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի» (Գործք ԻՉ:5), «Մի՛ որ զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ և կրօնիւք հրեշտակաց...» (Կողոս. Բ:18): *Աշխարհաբար տեքստում այս* «կրօնիւք» *բառը փոխարինուած է* «պաշտամունք»-*ով: Դրութիւնը գրեթէ նոյնն է Յակոբոս Առաքեալի թղթի ներքոյիշեալ երկու դէպքերում էլ, որտեղ գրաբարեան* «կրօնաւորութիւն» *բառը փոխարինուած է աշխարհաբար* «բարեպաշտ»-*ով.* «Եթէ որ կամիցի կրօնաւոր լինել, և ո՛չ սանձահարեսցէ զլեզու իւր, այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապա՛ր է կրօնաւորութիւնն:

[3] Խորապէս գիտակցելով միջեկեղեցական մի շարք տարբերութիւններ՝ սոյն յօդուածում ձեռնպահ ենք մնում վկայակոչելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետութիւնը՝ բացառութեամբ մի քանի դրոյթների, որոնք, միշ թէ շատ, ընդհանուր են աւանդական միւս Եկեղեցիների համար նոյնպէս:

[4] «Հադիթհ (حديث)» բառը, արաբերէնից թարգմանաբար, նշանակում է «նորութիւն, զեկոյց, տեղեկութիւն»: Իսլամական «Սուննահ»-ը բաղկացած է հադիթներից, որոնք տեղեկութիւններ են հաղորդում Մուհամեդի և իր զինակիցների վարմունքների վերաբերեալ: «Սուննահ»-ը, Ղուրանի կողքին, մուսուլմանների աւանդական գործունէութեան հիմունքի միւս «գիրքն» է: Այս մասին մանրամասն՝ տե՛ս, **Karen Armstrong**, Islam, A Short History, Modern Library Paperback Edition, 2002, էջ 49:

[5] Տե՛ս, **Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց,** Կոստանդնուպոլիս, 1895: **Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց**, Վենէտիկ, 1085: **Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների,** Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւն, 2010:

[6] **Jacobs Louis**, Jewish Virtual Library, Encyclopedia Judaica: Halakhah, http://www.jewishvirtuallibrary.org/halakhah:

[7] Տե՛ս, The Lexham English Bible English-Greek Reverse Interlinear New Testament. Copyright 2010 Logos Bible Software:

Կրօնաւորութիւն սո՛ւրբ և անարատ՝ առ ի յԱստուծոյ և ի Հօրէ՝ ա՛յս է...» (Յկվբ. Ա:26-27):

Վերջապէս, Ղուրանը, որպէս «կրօն և կեանքի ու մահուան» *հայեցակարգ, կիրառում է* «դին (دين - din)» *հասկացությունը*[8]*:*

Արդի արեւմտեան աշխարհում լայնօրէն կիրառուող «ռելիգիոն (religion)» *հայեցակարգը իր ներկայիս իմաստը ձեռք է բերել է. Բ. Թեյլորի մարդաբանական աշխատութիւնների լոյս ընծայմամբ. վերջինս* «...համակարգայնօրէն կիրառեց այս տերմինը աշխարհի բոլոր կրօնների վերաբերեալ»[9]: *Մինչ այդ, կաթոլիկ եկեղեցու հզօր գործիչների (Լակտանտիուս, Օգոստինոս, Աքվինացի, և այլք) ազդեցութեան ներքոյ, Կիկերոնի աշխատութիւնների շնորհիւ լայն շրջանառութիւն ստացած, այս բառը համարւում էր* «քրիստոնէութիւն» *բառի համարժէքը*[10]*:*

Բոլոր լեզուներում այս հասկացութիւնը ենթարկուել է իմաստային մի շարք փոփոխութիւնների, ուստի խնդրի յստակեցման համար հարկաւոր է վերլուծել և պարզաբանել, թէ ի՞նչ նշանակութիւն ունի «կրօն» *հասկացութիւնը ոչ թէ հաւատացեալ անձի արժեհամակարգում, այլ գիտափիլիսոփայական-ակադեմիական շրջանակներում: Հաշուի առնելով այս իրողութիւնը՝ ստորեւ վեր է հանւում* «կրօն» *հայեցակարգի բաղկացուցիչ հիմնական տարրերը, որոնց վերլուծութիւնը առաւել բացորոշ կը դարձնի* «կրօն»*-ի էութիւնը.* «կրօն»*-ի բաղկացուցիչ հիմնական տարրերն են՝ մենիշխանութիւն, եզրոյթի մենաշնորհ, ջատագովութիւն, հաւատք, փրկչականութիւն, անվերապահ խոնարհութիւն առ կրօնական առաջնորդը, տեղիքի ճշմարտութեան վաւերականութիւն՝ անձնաւորման միջոցով, ժառանգորդութիւն, և այլն:*

ա) **մենիշխանութիւն.** *Մովսէսը, ի թիւս բազմաթիւ այլ վկայութիւնների, Աստծոյ անունից պատուիրում է.* «Ես եմ Տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց ի տանէ ծառայութեան: Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն: Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան. որ ինչ յերկինս ի վեր, եւ որ ինչ յերկիր ի խոնարհ, եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի: Մի՛ երկրպագանիցես նոցա, եւ մի՛ պաշտեսցես զնոսա. զի ես եմ Տէր Աստուած քո՝ Աստուած **նախանձոտ**» (Ելից Ի:2-5), *(բնագրային մէջբերումներում առկայ ընդգծումները մերն են - Գ. Յակոբեան)... Այլեւ.* «Լո՛ւր Իսրայէլ, տէր Աստուած մեր՝ **Տէր մի է:** Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձէ քումմէ, եւ յամենայնէ զաւրութենէ քումմէ եւ յամենայն մտաց քոց» (Երկ. Աւրինաց Զ:4-5): *Ե՛ւ Քրիստոնէութիւնը, և Իսլամը, հենուած լինելով, նաեւ Հին Կտակարանի վրայ, լիարժէքօրէն ընդունում են մէջբերուած պատուիրանները, և այս մէջբերման վերջին նախադասութիւնը Տէր Յիսուսը յայտարարում է՝ որպէս* «...մեծն եւ առաջին պատուիրան» (Ղուկ. ԻԲ:38):

Իսկ ինչ վերաբերում է Ղուրանին[11]*, ապա, կարելի է ասել, չկայ մի սուրահ, որում այս մասին պատուեր չտրուի, օրինակ.* «Օ՜, մարդկութիւն, պաշտեցէք ձեր Տիրոջը, ով արարել է ձեզ...» (Սուր. 2:21), «Նրանից բացի, **ուրիշ ոչ ոք չպիտի՛ պաշտուի...**» (Սուր. 3:6), «Ասա՛ դու. «...ձեր Աստուածը **մէկ Աստուած է...**» (Սուր. 54:6): *Այս իրողութիւնն Իսլամում արտայայտւում է* «թավհիդ (توحيد, tawhid) - Ալլահի մէկութիւնը խոստովանելու»[12] *հայեցակարգով:*

Այս պատուիրաններն իրականացնելը՝ բոլոր հաւատացեալներին «պարտադրեցնում» *է մարդկութեանը բաժանել երկու խմբի՝ նոյնակրօնների և մոլորեալ-*

---

[8] Տե՛ս, **Ramadan Tariq**, Islam: The Essentials, Penguin Random House UK, First published 2017, էջ 274:

[9] **De Cruz, Helen**, "Religion and Science", The Stanford Encyclopedia of Philosophy (Spring 2017 Edition), First published Tue Jan 17, 2017, 1.2.

[10] Տե՛ս, The Catholic Encyclopedia, article - ''Religion'', derivation, analysis, and definition, vhttp://www.newadvent.org/cathen/12738a.htm :

[11] **Quran**, english translation, modern english translated from arabic by Talal Itani, published by ClearQuran, Dallas, Beirut, **www.ClearQuran.com** .

[12] Хрестоматия по исламу, составитель и ответственный редактор **С. М. Прозоров,** М.: Наука, «Восточная литература», 1994, с. 207.

կործանուողների։ Յանկացած իսկական հաւատացեալի համար բոլոր մարդիկ կա՛մ նոյնակրօն են, կա՛մ՝ աստուած հայհոյող. «...և ամենայն որ ոչ խնդրիցէ զՏէր Աստուած Իսրայէլի՝ մեռցի, յերիտասարդէ մինչեւ ի ծերն, և յառնէ մինչեւ ցկին» (Բ Մնաց. ԺԵ:13):

բ) **Եզրոյթի մենաշնորհում.** *ոչ մի կրօն չի կարող հանդուրժել, որ օրինակ՝ Աստուած, սրբութիւն, աղանդ, ևլն. հասկացութիւնների մասին դատողութիւններ կատարուեն, այլ մօտեցմամբ, քան իրենն է։ Կրօնը չի հանդուրժի ոչ միայն այլ կրօնի մօտեցումները, այլ նաեւ՝ հոգեւոր մշակոյթի այլ տեսակի սուբյեկտի, ասենք, արուեստարարի կամ գիտնականի մօտեցումը, եթէ վերջիններս* «համարձակուեն»՝ *տուեալ կրօնի ընդունածից բացի, այլ կարծիքներ ունենալ.* «...Աստուած՝ ոչ թէ գիտական, այլ **կրօնական հասկացութիւն է**. գիտութիւնը կարող է դրանով զբաղուել լոկ այնքանով, որքանով որ՝ այն գիտութիւն է կրօնի մասին»[13]։

գ) **Ջատագովութիւն.** *բոլոր կրօնները, համոզուած լինելով, որ այլակրօնները կամ կործանուած են կամ կործանման եզրին, իսկ իրենց պատուիրուած է՝ շարունակել Փրկչի առաքելութիւնը, ձգտում են ցանկացած մարդու, ամէն գնով (յաճախ՝ կեանքի), դարձնել առ իրենց կրօնը։*

Ջնայեած Հին Կտակարանում հանդիպում ենք մի քանի դէպքերի, երբ ոչ-հրեան՝ Յակոբ-Իսրայէլի ազգին չպատկանող անձը, ընդունում է Մովսիականութիւն, սակայն այս կրօնում գլխաւորապէս խրախուսւում ու հետեւողականօրէն իրականացւում է Յակոբի զաւակների սերունդների նկատմամբ իրականացուած կրօնական ջատագովութիւնը։ Սա բնական է, որովհետեւ այստեղ գործում է «ընտրեալ ազգ» *հայեցակարգը։ Բայց սա բնաւ չի՛ խանգարում՝ համայն աշխարհում Տիրոջ ջատագովութիւնն անելուն.* «Խոստովան եղերուք Տեառն, եւ կարդացէք զանուն նորա, **պատմեցէք զգործս նորա մեծամեծս,** աւրհնեցէք զնա, եւ պատմեցէք ամենայն հեթանոսք զսքանչելիս զոր արար...» (Ա Մնաց. ԺԶ 8-9): *Գալով կրկին Յակոբի սերունդներին՝ ասենք, որ ցանկացած հրեայ, ամէն պահի էլ, կարող էր* «խոտորուել ուղիղ ճանապարհից», *ուստի Հին Կտակարանում կարելի է հանդիպել կրօնական մի շարք բարենորոգումների.* «Ղեւտացիք եւ ...քահանայք. եւ ուսուցանէին զՀուդա, եւ ընդ նոսա զգիրք օրինացն Տեառն, եւ անցանէին ընդ քաղաքսն Հուդայ, եւ ուսուցանիէին զժողովուրդն» (Բ Մնաց. ԺԷ:8-9):

Քրիստոնէութեան դէպքում, աշխարհն ունի գրական կոթողների մի հսկայ գանձարան, որը կոչւում է ջատագովական գրականութիւն։ Եւ այս ջատագովութիւնն սկսում է հէնց Քրիստոնէութեան Հիմնադրից և իր բուռն ծաղկումն է ապրում առաքելական շրջանից սկսած. «Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հաւր՝ եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյն Սրբոյ։ Ուսուցէք նոցա պահե՛լ զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ» (Մտթ. ԻԸ:19-20):

Իսլամը նոյնպէս, սկսած իր հիմնադրով, ջատագովական է, և այս փաստը մէկ անգամ չէ, որ արձանագրուած է և՛ Ղուրանում ու Սուննայում, և՛ պատմաուսումնասիրական փաստաթղթերում. Մուհամեդը, թէեւ արդէն զառանցելով, սակայն նոյնիսկ մահուան պահին, «ջատագովեց». «Հեղձաձայն խօսելով չկապակցուած բառեր «ո՛չ բարձր - ընկերնե՛ր - դրախտում»[14]։

դ) **Հաւատք**. *այս երեւոյթն այնքան սերտ է կապուած կրօնին, որ երբեմն նոյնացւում է կրօնի հետ։ Չկայ* «կրօն» *հասկացութեան մի բացատրութիւն, որն այս կամ այն չափով կապ չնոյնանայ հաւատքի հետ։ Եւ դա պատահական չէ. կարելի է ասել՝ և՛ ողջ Աստուածաշունչը, և՛ ողջ Ղուրանը, իրենց պատմութային կողմով, արձանագրում են հաւատի մասին նշանաւոր իրադարձութիւններ։ Աբրահամը՝ Հաւատացյալների հայրը, ով վիթխարի կարեւորութիւն է ներկայացնում երեք կրօններում էլ, նախեւառաջ, հէնց հաւատով է, որ նշանաւորւում է.* «Եւ **հաւատաց** Աբրահամ

---

[13] **Булгаков Сергий**, “Свет невечерний. Созерцания и умозрения”, Серия «Мыслители XX века», Москва, изд. «Республика», 1994, с. 25.

[14] **Соловьев Владимир**, ”Магомет. Его жизнь и религиозное учение”, Серия «Жизнь замечательных людей», 1896, с. 57.

Աստուծոյ, եւ համարեցաւ նմա յարդարութիւն» (Ծն. ԺԵ:6):

Հաւատ(ք) բառի բազմանշանակութիւնը պարտադրում է՝ որոշ ճշգրտումներ և իմաստի յստակ արձանագրում։

Պօղոս Առաքեալը սահմանում է հաւատք հասկացութիւնը. «Զի՞նչ են հաւատք, եթե ոչ՝ յուսացելո՛ց իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութի՛ւն որոց ո՛չն երեւին» (Եբրայ. ԺԱ:1): *Այստեղ* «յանդիմանութիւն» *բառը նշանակում է.* «...Յայտնապէս ներկայացնելը, ցոյց տալը, երեւան բերելը..., ապացոյց, ակներեւ՝ բացայայտ լինելը, ակներեւութիւն...»[15]։

Ռուս փիլիսոփայ Ն. Բերդեաեւի գտնում է, որ «ոչն երեւին»՝ *չերեւացողները (կամ հակառակը՝ երեւացողները), բառը հարկաւոր է հասկանալ* «ստիպողաբար տրուածութեան»[16] *բացակայութեան (կամ առկայութեան) իմաստով։*

Ս. Պօղոսի սահմանումից երեւում է, որ խօսքը վերաբերում է այնպիսի իրողութիւնների, որոնք ապագայում լինելու, կամ այլ պատճառով, անմիջականօրէն զգայութեանը տրուած չեն։ Ուստի դրանք կարող են տրուած լինել բացառապէս մտակառոյցի միջոցով։ Հետեւաբար կարելի է եզրակացնել, թէ հաւատքը վերաբերում է, բացառապէս, ինչ-որ դատողութեան և / կամ դատողութիւնների հաւաստիութեան աստիճանին։ Աստուածի լաւագոյն ապացոյցը «հաւատացեալ» *հասկացութեան՝ կրօնի մէջ լայն շրջանառութիւն ստանալու իրողութիւնն ու ծագումն է. Թովմաս Առաքեալը՝* «Անհաւատ» *կոչուածը, կասկածի տակ է դնում Քրիստոսի Յարութեան լուրն արտայայտող դատողութիւնը՝ մտակառոյցը, և երբ յարուցեալ Քրիստոս երեւում է առաքեալներին, այդ թուում նաեւ Թովմասին (*«ստիպողաբար տրուածութեամբ»՝ *ցոյց տալով ու առաջարկելով շօշափել մարմնի վերքերը), ու ապացուցում Իր Յարութեան լուրի իսկութիւնը, Տէր Յիսուսը խօսակցութիւնը եզրափակում է հետեւեալ արտայայտութեամբ.* «...եւ մի՛ լինիր անհաւատ՝ այլ **հաւատացեա՛լ**» (Յովհ. Ի:27):

Ու չնայեած, բազմաթիւ անգամ և՛ Աստուածաշնչում, և՛ Ղուրանում, հաւատ հասկացութիւնն օգտագործւում է բազմապիսի իմաստներով, սակայն բոլոր դէպքերն էլ փոխաբերութիւններ են, եթէ չեն արտայայտում հաւաստիութեան աստիճանի իմաստը։ Յատկանշական է, որ Աստուածաշունչ մատեանի երկրորդ մասը՝ Նոր Կտակարանը, անուանւում է նաեւ Աւետարան։ Մի բառ, որ ծագում է հին յունարէն «Ευαγγελιον (evangelion)»[17] *բառից և նշանակում* «Ուրախ լուրերու տեղ»[18]։ *Իսկ* «լուրը» *բաղկացած է լինում մտակառոյցից՝ դրոյթ(ներ)ից։ Եւ, իհարկէ, պատահական չէ, որ Աւետարանը, երկրորդ իմաստով, նշանակում է* «Որեւէ ուսմունքի հիմնական դրոյթների ամբողջութիւնը ներկայացնող շարադրանք (գիրք, ժողովածու)»[19]:

Այսպիսով, քանի որ կրօնի տեսական-վարդապետական կողմը իրենից ներկայացնում է դրոյթների համակարգ՝ մտակառոյց, ուստի հաւատքն այն վերաբերմունքն է՝ վստահութիւնը, որը հաւատացեալը տածում է այդ դրոյթների նկատմամբ։ Օրինակ՝ «ես հաւատում եմ Յարութեանը» *արտայայտութիւնը փոխաբերութիւն-կրճատութիւն է, որը նշանակում է՝* «ես հաւատում եմ, թէ ճշմարիտ է այն պնդումը, ըստ որի, Քրիստոս յարութիւն է առել»: *Ուրեմն՝* «հաւատ» *հասկացութիւնը նշանակում է՝* «Հաստատուն համոզմունք...»[20], «...հոգիին ունեցած վստահութիւն ...»[21], *հաւաստիութեան զգացում ինչ-որ դրոյթի նկատմամբ։*

Սուրբ Գրիգոր Տաթեւացին, «հաւատք» *հայեցակարգը բացատրելիս, վկայակոչում է մի շարք հեղինակութիւնների, որոնք անվերապահ հեղինակութիւններ են բոլոր*

[15] **Ղազարեան Ռուբէն Սերոբի**, Գրաբարի Բառարան, Երեւան, 2000, էջ 219:

[16] **Бердяев Н. А.,** ” Философия Свободы – Смысл Творчества”, Москва, «Правда», 1989, с. 45.

[17] **Աւետիքեան Հայր Գաբրիէլ, Սիրմէլեան Հայր Խաչատուր, Ագերեան Հայր Մկրտիչ,** Նոր Բառագիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 394:

[18] **Ճիզմէճեան Պետրոս Վրդ.,** Հայերէն Աշխարհաբար Լեզուի Լիակատար Բառարան, Հալէպ, 1954, էջ 565:

[19] **Աղայեան Էդուարդ Բագրատի,** Արդի հայերէնի բացատրական բառարան, Երեւան, 1976, 120:

[20] Նոյն տեղում, էջ 834:

[21] **Մանուկեան Նուրիան Արք.,** Սուրբ Յակոբի Բեմէն, (53 Քարոզներ), Երուսաղէմ, 2004, էջ 35:

աւանդական եկեղեցիների համար, և մէջ բերում նրանց տուած սահմանումները. «...հաւատն է հիմն ամենայն առաքինութեան, ...սկիզբն հոգեւոր կենաց, ...արքազան կրօնից հիմն»[22], *և այլն։ Վերջապէս՝ ակնարկում է սուրբ Գրիգոր Լուսաւորչի հանրայայտ ձեւակերպումը՝ պնդելով, որ* «հաւատն է մտաց լուսաւորութիւն առ ի ճանաչել զծայրագոյն ճշմարտութիւն»[23]։ *Այս առումով՝ Ֆ. Տերտուղիանոսի՝* «Credo quia absurdum est *(Հաւատո՛ւմ եմ, որովհետեւ անհեթեթ է)» յարացուցային յայտարարութիւնը*[24] *հանդիսանում է յայտանիշ՝ կրօնում հաւատքի ունեցած կենտրոնական դերի վերաբերեալ։*

ե) **Փրկչականութիւն** *(մեսիականութիւն). կարելի է ասել, մարդու վերաբերեալ, բոլոր կրօնների միակ նպատակը՝ մարդու փրկութիւնն է։ Հետեւաբար, առաջ է գալիս, Փրկչի անձի հարցը։ Եւ եթէ Պօղոս Առաքեալը հռետորաբար է հարցնում, թէ* «Ա՛յր մի տառապեա՛լ եմ ես. ո՞վ **ապրեցուսցէ** զիս ի մարմնոյ աստի մահու» (Հռոմ. է:23), *ապա պատճառն այն է, որ Փրկիչն արդէն յայտնել էր Իրեն.* «...ո՛չ եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի **փրկեցից**...» (Յովհ. ԺԲ:46), *իսկ հետեւորդներն էլ իրար ասում էին.* «...Գտա՛ք զմեսիայն...» (Յովհ. Ա:41)։

Հին Կտակարանում բազմաթիւ պատմութիւններ ունեն ներքոյիշեալ եզրափակիչ խօսքը. «...այսաւր արար Տէր **զփրկութիւն...**» (Ա Թագ. ԺԱ:13)։ *Մովսիսական յարացոյցում տարբեր ժամանակներ տարբեր* «փրկիչներ» *են ի յայտ գալիս, որոնց միջոցով Աստուած, հրաշքներով ուղեկցուող, փրկութիւններ է առաքում Իր ժողովրդին։ Եւ Յովսէփին պատկանող ներքոմէջբերեալ խօսքը լաւագոյնս փաստում է ասուածը.* «...ֆանզի ի **փրկութիւն** առաքեց զիս Աստուած առաջի ձեր» (Ծն. Խե:6)։

Դրութիւնը լիովին նոյնն է նաեւ Իսլամի պարագայում։ Չնայեած որ բաւական կնճռոտ տարաձայնութիւններ կան իսլամական ենթադրեալ փրկչի վերաբերեալ՝ կապուած սունի, շիա և այլ ուղղութիւնների, իմամականության ինստիտուտի, վախճանաբանական հակասական պնդումների, Իսայի, Մահդիի, Մուհամեդի, Դաջալի՝ Դատաստանի օրը կատարելիք դերի, և այլնի վերաբերեալ, սակայն «փրկչականութեան» *հայեցակարգը անհրաժեշտաբար առկայ է և խիստ այժմէական նաեւ Իսլամում*[25]։

զ) **Անվերապահ խոնարհութիւն առ կրօնական առաջնորդը.** *Երբ օրուայ քահանայապետ Անանիան հրամայեց՝ հարուածել ս. Պօղոս Առաքեալին,* «Պատղոս ասէ ցնա. Հարկանելոց է զքեզ Աստուած, որմ բռեալ, եւ դու նստիս դատել զիս ըստ օրինաց, եւ առանց օրինաց հրամայես զիս հարկանել» (Գործք ԻԳ:3)։ *Սակայն երբ ս. Պօղոսին տեղեկացրին, որ հրամայողը քահանայապետն էր, Պօղոս առաքեալը յայտարարեց, թէ չգիտեր, որ քահանայապետն էր հրամայողը և յղուեց հինկտակարանեան հրահանգին* «...զիշխան ժողովրդեան քոյ մի հայհոյեսցես» (Ելից ԻԲ:28)։ *Այսօրինակ անվերապահ խոնարհութիւնը բազմիցս է հանդիպում հինկտակարանեան կրօնական առաջնորդների՝ դատաւորների, քահանաների, մարգարէների, թագաւորների..., պարագայում, իսկ Քրիստոնէութեան շրջանակներում՝ Պօղոս Առաքեալը յստակ կարգադրում է.* «Ունկնդի՛ր լերուք առաջնորդաց ձերոց, եւ հպատա՛կ կացէք նոցա...» (Եբր. ԺԳ:17)։ *Այլեւ՝* «Աղաչեմ զձեզ եղբարք՝ ճանաչե՛լ զվաստակաւորս եւ զվերակացուս ձեր ի Տէր, եւ զխրատիչս ձեր» (Ա Թեսաղ. Ե:12-13)։ *Այս աւանդութիւնը առաւել ամրապնդւում է յետագայում և իր բառացի արտայայտութիւնն ունենում, ի թիւս բազմաթիւ փաստաթղթերի, Սուրբ Իգնատիոս Աստուածազգեացի նամակներում.* «...Եպիսկոպոսին պէտք է նկատել ինչպէս անձամբ Տիրոջը»[26]։

---

[22] **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 573:

[23] Նոյն տեղում, էջ 571:

[24] Տե՛ս **Tertullianus Quintus Sept. Flor.**, «De Carne Christi», Tertullian's Treatise on The Incarnation, LONDON, S.P.C.K,, 1956, էջ 19:

[25] **Սահակեան Նարիա,** «Իսլամական Պետութեան» Կողմից Վախճանաբանական Պատկերացումների Ակտուալացման Փորձերը, Երեւանի Պետական Համալսարան, Քաղաքակրթական և Մշակութային Հետազոտութիւնների Կենտրոն, Վերլուծական Տեղեկագիր, Երեք ծովերի համակարգ, թիւ 9, Երեւան, 2016, էջեր 179, 182 -183:

[26] **Իգնատիոս Սբ. Անտիոքացի,** «Նամակներ», թարգմանեց՝ Մաշտոց Վահէ Ղազարեան, Երեւան, 2011, էջ 50:

Վերջապէս՝ Իսլամում այնքան էական դեր է յատկացուած խոնարհութեանը, որ այն յաճախ դիտւում է՝ որպէս ստրկացնող կրօն. մի իրողութիւն, որ արտայայտուած է նաեւ սոյն կրօնի անուան մէջ։ Այս նկատառումով՝ իսլամական բազմաթիւ մտաւորականներ փորձում են «իսլամ» *բառի առաջացումը բխեցնել* «խաղաղութիւն» *հասկացութիւնից՝ ի հակադրութիւն* «ենթարկուած», «ստրկացած»-*ի*[27]*։*

է) **Տեղիքի ճշմարտութեան վաւերականութիւն՝ անձնաւորման միջոցով.** *էական հարցերի վերաբերեալ տեղեկութեան վաւերականութիւնը պայմանաւորուած է հեղինակի բարձր դիրքով (հեղինակի սրբութիւնից՝ տեքստի հաղորդումի բացարձակ ճշմարտացիութիւն). նոյնիսկ առաջին դարում, երբ տեքստը հաղորդում էր մի վիճելի դրոյթ, կասկածի տակ էր դրւում, ոչ թէ դրոյթի ճշմարտացիութեան հարցը, այլ հեղինակի ով լինելը։ Եւ եթէ հաստատուեր, թէ տեքստը պատկանում է այն սուրբ հեղինակին, որը տուեալ տեքստում ներկայացուած է որպէս հեղինակ, ապա դրոյթը կ'ընդունուեր անվերապահօրէն։ Ահա այս է նաեւ պատճառներից մէկը, որ Պօղոս Առաքեալը տարբերակիչ նշան է տալիս իր ընթերցողներին.* «Ողջոյնս՝ իմո՛յ ձեռին Պաւղոսի է, որ է նշանակ յամենա՛յն թուղթս այսպէս գրեմ» (Բ Թեսաղ. Գ:17)։ *Այս աւանդոյթը շարունակուեց, և Աստծոյ մասին գիտելիք ստանալու հիմնական* «տեղի» (տեղեկութեան աղբիւր), *ի թիւս այլնի, համարւում են այն գրուածքները, որոնք հեղինակել են* «Աստուածաբանք եկեղեցու» (ուղղափառ հայրեր և մեր եկեղեցու աստուածաբան վարդապետներ)[28]։

Մովսիսականութեան բոլոր ճիւղերն էլ ընդունում են, որ Հնգամատեանի առնուազն առաջին չորս գրքերը հեղինակել է Մովսէսը՝ աստուածային ներշնչմամբ. «Եւ ասէ Տէր ցՄովսէս. Ել առ իս ի լեառն…։ Եւ տաց քեզ տախտակս քարեղէնս եւ աւրէնս եւ պատուիրանս, զորս գրեցի, լինել նոցա աւրէնսդիր» (Ելից ԻԴ:12)։

Ղուրանի պարագայում տեքստի հեղինակը համարւում է Ալահը, ով «ներրեւ է ուղղարկել Գիրքը» (ի թիւս բազմաթիւ օրինակների՝ Սուր. 6:90)։ *Իսկ Սուննայի պարագայում, հադիթը վաւերական է համարւում, եթէ այն բաւարարում է իսնադի՝ շղթայի սկզբունքը. իսլամական գրիչները, հադիթ վկայակոչելիս, թուարկում են այն մի քանի հեղինակներին, որոնց միջոցով հադիթը, նոյն ճշգրտութեամբ, հասել է մեր ժամանակներ*[29]*։*

ը) **Ժառանգորդութիւն.** *ցանկացած կրօնական կառոյց իր գործունէութեան վաւերականութեան առաջին պայման է համարում ուղիղ կապը իր նախորդ սերնդի և անուղղակի կապը կրօնի հիմնադրի հետ։ Այս նկատառումով Մուհամեդը Իսլամը, իբրեւ շարունակութիւն, նոյնացնում է Մովսիսականութեան ու Քրիստոնէութեան հետ և յայտարարում, թէ մինչ ինքը, Ալահը մարդկանց մօտ ուղարկեց* «Նոյին և Մարգարէներին՝ նրանից յետոյ, …Աբրահամին և Իսմաիլին և Իսահակին և Յակոբին ու նրա զաւակներին, Յիսուսին և Այուբին և Յառունին և Սուլեյմանին։ Եւ մենք Դաւթին տուեցինք Զաբուրի (Սաղմոսների) Գիրքը» (Սուր. 4:163)։ *Իսկ Մուհամեդի մահուանից յետոյ, մուսուլմանական համայնքի (ումմահ) ղեկավարի ժառանգորդման սկզբունքի բացակայութեան պատճառով, տեղի ունեցաւ առաջին ներհամայնքային պառակտում-պատերազմը (ֆիթնահ), և առաջացան սունիական, շիական, խարիջիական (յետոյ էլ՝ իբադիական), և մի շարք այլ (ենթա)ուղղութիւններ։ Իսլամն իր ողջ պատմութեան ընթացքում չկարողացաւ հիմնովին լուծել այս խնդիրը, ու թէեւ շիականութիւնն՝ իր մի շարք ճիւղերով հանդերձ, ընդունում է իմամութեան ինստիտուտը, սակայն միեւնոյն է՝ առաջնորդի վաւերականութեան հարցում, Իսլամը ներկայումս էլ լուրջ ճգնաժամ է ապրում*[30]*։*

Ինչ վերաբերում է Մովսիսականութեանը, ապա Մովսէսի գործունէութեան

---

[27] Տե՛ս, **Ramadan Tariq**, Islam: The Essentials, Penguin Random House UK, First published 2017, էջ 75.

[28] **Գալուստեան Շնորհք եպս.,** «Տեղիք Աստուածաբանութեան», Երուսաղէմ, 1985, էջ 1։

[29] Տե՛ս, նոյն տեղում, էջ 70։

[30] Տե՛ս, **Ramadan Tariq**, Islam: The Essentials, Penguin Random House UK, First published 2017, էջ 39 - 43.

սկիզբը, որը տեղի ունեցաւ անապատում, երբ Մովսէսին երեւաց այրուող ու չկիզուող մորենին, Աստուած նրան ներկայանում է՝ շեշտադրելով ժառանգորդութիւնը. «Եւ ասէ ցնա, Ես եմ Աստուած հաւր քոյ, Աստուած Աբրահամու. եւ Աստուած Սահակայ. եւ Աստուած Յակոբայ» (Ելից Գ:6): *Այս բանաձեւը յետագայում հանդիսացաւ Մովսէսի* «այցեքարտը» *իր ժողովրդի մօտ։*

Վերջապէս, Քրիստոնէութեան պարագայում, ժառանգորդութեան այս սխեման իրականացւում է ձեռնադրութեան միջոցով (տե՛ս, օրինակ, Ա Տիմ. Ե։14)։ Եւ այս նկատառումով է, որ Հայոց կաթողիկոսները ձեռնադրուելիս՝ հանդիսաւորապէս երդւում են, որ իրենք պահպանելու են ս. Թադէոս և ս. Բարդուղիմէոս առաքեալների ու ս. Գրիգոր Լուսաւորչի հիմնադրութիւնները[31]։ Այլեւ՝ «Եթէ մէկը շեղուի առաքելոց վարդապետութիւնից, օտարանայ նոցա աւանդութիւններից, կը տուի նոցա ձեռնադրական-շնորհաբաշխական յաջորդութիւնից, նա չի լինիլ և Քրիստոսի ճշմարիտ եկեղեցի»[32]: *Ա. Տեր-Միքէլեանի այս դրոյթը միանշանակ համոզմունք է բոլոր աւանդական եկեղեցիների համար, որոնք իրենց հիմնադրման պահից ցայսօր շարունակում են յորդորել իրենց հաւատացեալներին.* «Թող այսօր անգամ մը եւս վերանորոգենք մեր ուխտերը մնալու հարազատ ու հաւատարիմ զաւակները մեր Մայր Եկեղեցւոյ, միշտ ըլլալու նուիրեալ անդամները **մեր նախահայրերէն մեզի աւանդ մնացած** այս մեծ սրբութեան...»[33]:

Յաւելենք, որ որպէս «կրօն» *հայեցակարգի տարր, կարելի է արձանագրել նահատակութիւն, խոստովանահայրութիւն, համայնքայնութեան, պատերնալիզմ (հայրախնամութի՞ւն), նեպոտիզմ (խնամակալութի՞ւն), ճգնակեցականութիւն, անհատի՝ անցեալի նկատմամբ ատելութիւն ու ապագայապաշտութիւն, բանադրանք, ուղղափառութիւն, հերձուածողութիւն, վախճանաբանականութիւն և էլի մի շարք իրողութիւններ, որոնց համադրութիւնից ձեւակերպւում է* «կրօն» *հայեցակարգը։ Սակայն այս* «յաւելուածներին» *առանձնայատուկ չենք անդրադառնում, որովհետեւ, մեր կարծիքով, սրանք և մնացած բոլոր կրօնական իրողութիւնները լիովին արտայայտւում են մեր արձանագրած, թուով ութ, կէտերի շրջանակներում։ Միւսները վեր են առնւում սրանց մէջ։*

Վերը կատարուած «կրօն» *հայեցակարգի վերլուծութիւնը կ'ամբողջանայ՝ համադրուելով Մխիթարեան հայր Ղեւոնդ Ալիշանի մեկնաբանութիւնների հետ, ըստ որի, լատիներէնի* «...և իր զաւակին...» *ռելիգիո կամ ռելիգո (*religio / religo*)* «կ'անուանէ զայս, ...ստուգաբանեն կապ, կապեալ, կապուիլ, հաշուէ մարդկան ընդ Աստուծոյ կամ երկնից, հաշուէ մանաւանդ մարդկան իրարու հետ», *սկզբնական չէ, այլ ծագել է մէկ այլ հիմքից. այս հասկացութեան իմաստը կանխաւ ենթադրւում է, որ կայ ինչ-որ բան, որի հետ կապւում են մարդիկ։ Իսկ հայերէն* «Կրօնք»-*ը* «ինքնութիւն կամ ինքնաբերութիւն մի յայտնէ»: *Ալիշանը, վկայակոչում է մի հին անյայտ հեղինակի, որը տալիս է շատ հակիրճ ու իմաստալից ստուգաբանութիւն.* «Կրօնք՝ Կիր և Հաւանութիւն»: *Այս* «Կիր»-*ը կրելու արմատն է, որտեղից էլ կիրք ու, հետեւաբար,* «ներքին և բուռն ինքնաբեր զգացում ...և հզօրագոյն կիրք բանաւոր մարդու ...և պարտաւորութիւնն առ գերագոյն էակն: Վայելչապէս յարէ ստուգաբանն՝ կրից հետ և Հաւանութիւն. իբրեւ անընդմէջ կամ անհրաժեշտ հետեւանք այդպիսի կրից հոգւոյ...»[34]: *Ալիշանի այս բացատրութիւնը լիովին համաձայնում է մի շարք բառարաններում կրօն բառի ստուգաբանութեան մէջ հանդիպող* «Կարգ, կանոն, օրէնք...: Կեանք, վարք, կենցաղավարութիւն»[35], «սովորութիւն, վարդապետութիւն, հաւատք»[36] *հասկացութիւնների*

---

[31] Տե՛ս, **Տէր-Միքէլեան Արշակ,** «Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը», Ս. Էջմիածին, 2007, էջ 326:

[32] Նոյն տեղում, էջ 283:

[33] **Մանուկեան Նուրիան Արք.,** Սուրբ Յակոբի Բեմէն, (53 Քարոզներ), Երուսաղէմ, 2004, էջ 177:

[34] **Ալիշան Ղեւոնդ,** «Հին Յաւատք կամ Հեթանոսական Կրօնք Հայոց», Վենետիկ - Ս. Ղազար, 1910, էջ 8-9:

[35] **Ղազարեան Ռուբէն Սերոբի,** «Գրաբարի Հոմանիշների Բառարան», Անթիլիաս, 2006, 395:

[36] **Աճառեան Հրաչեայ,** «Հայերէն Արմատական Բառարան», Երեւան, 1926, էջ 685:

իմաստներին։ Իսկ այս բոլոր հասկացութիւններն ունեն մէկ էական յատկանիշ, որը ընդհանուր է բոլորի համար էլ. «...նշանակութեան կարեւորութեամբ, ուղղուածութիւն առ անպայմանականութիւնը...»:

Արդ՝ պայքարելը անկրօնութեան, այլակրօնութեան, հերետիկոսութեան և հերձուածողութեան դէմ եղել ու մնում է բոլոր կրօնների հիմնական գործունէութեան ձեւերից մէկը։ Սա կրօնի հիմնարար սկզբունքներից է, որն, ինչպէս վերը ցոյց տրուեց, բխում է իր իսկ էութիւնից։ Ուրեմն կրօնի դէպքում, ոչ միայն վաւերական է բախումն իր հիմնարար դրոյթներին հակասող դրոյթների պաշտպանների հետ, այլեւ պարտադիր. սա կրօնի գոյութեան ձեւն է։ Այս հակամարտայնութիւնը, կրօնի պարագայում, ոչ միայն վաւերական, այլեւ լինելիութեան անհրաժեշտ պայման է։

Մինչեւ 19-20-րդ. դդ. գիտնականների կրօնական հաւատք ունենալը, որն ուղեկցում էր նրանց գիտական գործունէութեանը, բաւական տարածուած մի իրողութիւն էր։ Այս մօտեցմանը զուգահեռ՝ միշտ առկայ է եղել նաեւ հակադիր՝ հակակրօնական մօտեցումը, որն առաւել համակարգային ընթացք է ստանում, երբ «Դարուինի բուլդոգը»՝ *Թոմաս Հենրի Հաքսլին, հիմնում է* «Իfu ակումբ (X-club)»-*ը, որի շրջանակներում մի շարք պրոֆեսիոնալ գիտնականներ սկսում են պայքարել կրօնի դէմ։ Հակամարտութեան այս բախումը ծաւալւում էր, մասնաւորապէս էվոլիւցիոնիզմի շուրջ*[37]*։*

Կրօնն էլ, յանձին Քրիստոնէութեան, ոչ միայն պաշտպանւում է, այլեւ նախայարձակ լինում։ Այս բախումները, համակարգուած ձեւով ներկայացւում են գիտա-կրօնական «հանդիսատեսին» *1960-ական թուականներից՝ ի դէմս* «Zygon» *(հիմնադրուել է 1966թ.) ամսաթերթի, որի թեմատիկ ուղղուածութիւնը գիտա-կրօնական հիմնախնդիրներն էին*[38]*։*

Չնայեած որ հակամարտութիւնը շարունակւում է նաեւ ներկայումս, սակայն հակամարտող երկու բանակներում էլ եղել են ու կան մի շարք փոխզիջումներ, և անձինք, ովքեր մտահոգուած են՝ ոչ թէ այն խնդրով, թէ կողմերից ո՞րն է ճշմարտութիւնն ասում, իսկ միւսը կեղծիքը, այլ կողմերի յաշտեցմամբ և ներդաշնակեցմամբ. որոշ մտածողներ գտնում էին, որ գիտութիւնն ու կրօնը գործառնում են լիովին առանձին հարթութիւնների վրայ, և դրանք միմեանց չեն կարող հակադրուել։ Որոշները փորձում են պնդել, որ կրօնն իր արգելքներով, նոյնիսկ, մի շարք օգուտներ է բերել գիտութեան առաջխաղացմանը, իսկ ներկայումս, նոյնիսկ, հարցականի տակ է դրւում կրօն-գիտութիւն հակամարտային մոդելի իսկութիւնը։

Այն հակամարտային մոդելը, որը ցոյց է տալիս, թէ գիտութիւնն ու կրօնը ինքնին և սկզբունքօրէն հակամարտութեան մէջ են, պատմական, ընդամէնը, երկու հիմք է գտնում. Գալիլեոյի դատավարութիւնը և էվոլիւցիոնիզմին առնչուող դէպքերը. «Հակամարտային մոդելը զարգացուել ու պաշտպանուել է 19-րդ դարում, հետեւեալ՝ Ճոն Դրափերի «Կրօնի և գիտութեան հակամարտութեան պատմութիւն» *(1874) և Ուայթի երկհատորեակ՝* «Քրիստոնէութեան մէջ գիտութեան և աստուածաբանութեան պատերազմի պատմութիւնը» *հրատարակութիւններով*[39]*։*

Էվոլիւցիոնիզմի շրջանակներում կրօնի և գիտութեան յաշտեցման գործընթացներից նշանակալի հայեցակարգերից մէկը Սթիվեն Ճեին Գուլդի հեղինակած «Չխաչուող վարդապետութիւնն» (Nonoverlapping Magisteria) *է, որը հեղինակը հապաւում է որպէս՝* «NOMA»[40]*։ Հեղինակը գտնում է, թէ այս* «վարդապետութիւնն» *արդէն իսկ*

---

[37] Տե՛ս, **Desmond Adrian J.** , Thomas Henry Huxley, Encyclopaedia Britannica, https://global.britannica.com/biography/Thomas-Henry-Huxley .

[38] **De Cruz**, **Helen**, "Religion and Science", The Stanford Encyclopedia of Philosophy (Spring 2017 Edition), First published Tue Jan 17, 2017, 1.1.

[39] Նոյն տեղում, 1.3:

[40] **Gould Stephen Jay**, Nonoverlapping Magisteria, archive, http://www.blc.arizona.edu/courses/schaffer/449/Gould%20Nonoverlapping%20Magisteria.htm .

առկայ էր Յովհաննէս Պօղոս II Պապի Գիտութիւնների Պոնտիֆիկալ Ակադեմիային ուղղուած 1996թ.-ի հոկտեմբերի 22 հաղորդագրութեան մէջ, ըստ որի, Յովհաննէս Պօղոս II-ը վերահաստատում է Պիուս XII-ի դրական վերաբերմունքը էվոլիւցիոնիզմի վերաբարերեալ: Սակայն Պապն առաջադրում է մի շարք վերապահումներ՝ կանխաւ արձանագրելով, որ չի կարելի խոսել մէկ-միանշանակ տեսութեան մասին, այլ հարկաւոր է հաշուի առնել, որ ասպարէզում առկայ են էվոլիւցիոնիստական մի շարք տեսութիւններ: Դրանք կարող են ընդունելի լինել, եթէ չեն հակասում Պիուս XII-ի յայտարարութեանն այն մասին, որ «...Կաթոլիկ հաւատքը պարտաւորեցնում է մեզ՝ պնդել, որ հոգին ստեղծուած է անմիջականօրէն Աստծոյ կողմից»[41]: *Յովհաննէս Պօղոսը հռետորական հարցադրմամբ ակնարկում է քիմիայի ու ֆիզիկայի ոլորտներում կատարուող ուսումնասիրութիւնների և էվոլիւցիոնիզմի միջեւ անհրաժեշտաբար առաջացող հակասութիւնը, եթէ ընդունուի, իբր մարդու* «...հոգին կամ առաջանում է կենդանի նիւթի ուժերից կամ՝ որպէս այդ նիւթի պարզ էպիֆենոմեն. սրանք անհամատեղելի են մարդու մասին ճշմարտութեան հետ»[42]: *Պապն առանձնացնում է փորձարարական գիտութիւնների հետազօտական դաշտը և ոգեկան ոլորտն ուսումնասիրող գիտակարգերի օբյեկտներն ու ոլորտները:* «Ինչպէս,- *շարունակում է Վատիկանի Սուրբ Հայրը,*- մենք, յամենայն դէպս, կարող ենք նկատել մի շարք արժէքաւոր տուեալներ, որոնք վերաբերում են մասնաւորապէս մարդկային կեանքին: Բայց ինքնագիտակցութեան և ինքնաճանաչման մետաֆիզիկական գիտելիքի փորձառութիւնը, բարոյական խղճի, ազատութեան կամ գեղագիտական ու կրօնական փորձառութիւնը հարկ է վերլուծել փիլիսոփայական ինքնահայեցողութեան միջոցով, մինչդեռ աստուածաբանութիւնը հետամուտ է պարզելու Արարչի արարման սահմանային նշանակութիւնը»[43]:

Վերը յիշատակուած «Զխաչուող վարդապետութեան» *շրջանակներում Սթիվեն Գուլդը պատմում է մի անձնական փորձառութիւն, երբ իր ուսանողը, լինելով կաթոլիկ քրիստոնեայ, մի բողոքականի գաղափարների ազդեցութեան ներքոյ, շատ կտրուկ հարց է առաջադրում իրեն՝ որպէս դասախօս-գիտնականի.* «Ես համոզուած քրիստոնեայ եմ և էվոլիւցիոնիզմի նկատմամբ կասկած ունենալու պատճառ երբեք չեմ ունեցել...: Ասա՛ ինձ՝ կարո՞ղ է մարդը հաւատալ երկուսին էլ՝ Աստծուն և էվոլիւցիային»[44]: *Մերժելով արմատական (ֆունդամենտալ) բողոքականների կրեացիոնիստական հայեացքները՝ Գուլդը, որպէս այդ մօտեցման անհիմն պատճառ, մատնանշում է բողոքականների հաւատն առ* «Աստուածաշնչի իւրաքանչիւր բառի տառացի ճշմարտացիութիւնը», *որը, ըստ նրա ոչ մի բանական հիմնաւորում չունի*[45]:

Յանուն արդարութեան, հարկ է նշել, որ բողոքականները միայն այս հարցում չէ, որ առանց բանական հիմնաւորման, ուղղակի պնդումներ են կատարում: Սակայն հարկ է նաեւ նշել, որ հէնց իր իսկ տեսութեան և Պապի յայտարարութեան համաձայն, ինքը՝ Ս. Գուլդը, մասնագիտական ոչ մի վաւերականութիւն չունի նման դատողութիւններ կատարելու համար, մանաւանդ որ, քիչ թէ շատ, տեղեակ է միայն քրիստոնէութեան կաթոլիկ և բողոքական ուղղութիւններին. Արեւելեան Եկեղեցիների (նաեւ՝ այլ կրօնների) մասին՝ խօսք չկայ:

Գուլդը գտնում է, որ կրօնական կառոյցները, այդ թուում նաեւ իր ազգակիցները

---

[41] **Pius XII**, Encyclical Humani Generis of The Holy Father Pius XII to Our Venerable Brethren, Patriarchs, Primates, Archbishops, Bishiops, and other local ordinaries enjoying peace and communion with The Holy See concerning some false opinions threatening to undermine The Foundations of Catholic Doctrine, point 36, http://w2.vatican.va/content/pius-xii/en/encyclicals/documents/hf_p-xii_enc_12081950_humani-generis.html .

[42] **John Paul II Pope**, Message To The Pontifical Academy Of Sciences: On Evolution Magisterium Is Concerned with Question of Evolution for It Involves Conception of Man, point 5, https://www.ewtn.com/library/PAPALDOC/JP961022.HTM .

[43] Նոյն տեղում, կենտ 6:

[44] **Gould Stephen Jay**, Nonoverlapping Magisteria, archive, http://www.blc.arizona.edu/courses/schaffer/449/Gould%20Nonoverlapping%20Magisteria.htm .

[45] Տե՛ս, նոյն տեղում:

(Գուլդը հրեայ է) դիմել են վայրենությունների, որովհետեւ ժամանակին իրենց ձեռքում կենտրոնացրել են քաղաքական մեծ իշխանություն[46]։

Վերջապէս՝ եզրակացնում է Ստիվեն Գուլդը, որ ի տարբերություն գիտության, «Կրօնի ցանցը տարածում է բարոյականութեան նշանակութեան և արժէքի հարցերի վրայ։ Այս երկու վարդապետութիւնները *(իմա.՝ կրօնական և գիտական - Գ. Յակոբեան)* չեն խաչում, ոչ էլ զբաղեցնում են ողջ տարածքը *(համեմատի՛ր, օրինակի համար, արուեստի ուսուցումը և գեղեցիկի նշանակությունը)»[47]։*

Այսպիսով՝ Ս. Գուլդը «խմբագրում» *է Յովհաննէս Պօղոս II Պապի մտքերը և կրօնին վերապահում միայն բարոյական ինչ-ինչ հարցեր. մի բան, որը բացակայում է Պապի հաղորդագրության մէջ։ Գուլդը ճիշդ չի մեկնաբանում Պապի ուղերձի տեքստը՝ անտեսելով մի շարք պայմաններ, որոնք ուղիղ տեքստով արտայայտուած էին երկու պապերի ուղերձներում էլ։ Յատկանշական է, որ Յովհաննէս Պօղոս Պապը խիստ վերապահումով է ընդունում էվոլիւցիոնիստական միայն որոշ տեսութիւններ, իսկ կտրականապէս անընդունելի է համարում, Պիուս XII Պապի յիշատակած այնպիսի էվոլիւցիոնիզմը, որը* «...բացատրում է ամէն ինչի ծագումը և լկտիաբար պաշտպանում մոնիստիկ և պանթեիստիկ այն կարծիքը, իբր աշխարհը շարունակում է իր էվոլիւցիան»[48]։ *Պիուս Պապը յիշատակում է նաեւ որոշ տեսակի իմմանենտիզմ, պրագմատիզմ, էքզիստենցիալիզմ, դիալեկտիկական մատերիալիզմ, հիստորիցիզմ, կոմունիզմ[49], և այլ մետաֆիզիկական ուղղութիւններ և դպրոցներ, որոնք անընդունելի են Կաթոլիկ Եկեղեցու համար։*

Անիմաստ չէ նկատելը նաեւ, որ կաթոլիկական այս մօտեցումը նոյնպէս նորութիւն չէ. գրեթէ օրինաչափութեան մակարդակի են հասնում պատմական այն իրողությունները, երբ Կաթոլիկ Եկեղեցին, կանխաւ խիստ ագրեսիւ և կոշտ դիրքորոշում որդեգրած լինելով, յետագայում զիջում է կամ, նոյնիսկ, դառնում իր իսկ կողմից խիստ մերժման արժանացած իրողության ջատագովը։ Սակայն սա մի շարք ապացոյցներ պահանջող լուրջ ուսումնասիրության կարօտ թեմա է, որը չի մտնում մեր ներկայիս ուսումնասիրության շրջանակների մէջ։

Այսպիսով, որպէսզի գիտութիւն և կրօն հակամարտային մոդելի լեգիտիմության հարցը պարզուի հարկաւոր է յստակ ճշգրտել նաեւ «գիտութիւն» *անուանման ներքոյ հանդէս եկող իրողությունը։*

Պապի յիշատակած բոլոր տերմինները, այդ թուում նաեւ էվոլիւցիան (այն իմաստով, որով կիրառում է Պիուս XII-ը) գիտական տեսութիւնների անուանումներ չեն, սակայն սերտ կապ ունեն գիտության հետ։ Եւ հէնց սա է գլխաւոր պատճառներից մէկը, որ Յովհաննէս Պօղոսը առաջադրում է համապատասխան սահմանափակումը, իսկ Պիուսը յատուկ շեշտում, որ ինչ-ինչ տեսութիւններ միախառնուելով հանդէս են գալիս մէկ ընդհանուր անուանման ներքոյ. մի անուանում, որն իրականում լիովին այլ նշանակութիւն ունի։ Հետեւաբար «խայծի» *դեր է կատարում[50]։*

Ինչ վերաբերում է «գիտութիւն» *հասկացությանը, ապա այն նոյնպէս խիստ հեռաւոր արմատներ ունի մարդկության պատմության մէջ, սակայն արդի իմաստային կիրառությունը ստացել է 19-րդ դարում, երբ Ու. Ուվելը մշակեց այս հասկացության ներկայիս իմաստը՝ առանձնացնելով այն, այսպէս կոչուած, բնության կամ փորձա-*

---

[46] Տե՛ս, նոյն տեղում։

[47] Տե՛ս, նոյն տեղում։

[48] **Pius XII**, Encyclical Humani Generis of The Holy Father Pius XII to Our Venerable Brethren, Patriarchs, Primates, Archbishops, Bishiops, and other local ordinaries enjoying peace and communion with The Holy See concerning some false opinions threatening to undermine The Foundations of Catholic Doctrine, point 5, http://w2.vatican.va/content/pius-xii/en/encyclicals/documents/hf_p-xii_enc_12081950_humani-generis.html .

[49] Տե՛ս, նոյն տեղում, կէտեր՝ 5 - 7։

[50] Տե՛ս, նոյն տեղում։

բարական փիլիսոփայութիւնից[51]*:*

«Գիտութեան» *ներքոյ ներկայումս հասկացւում է* «...ճանաչողական գործունէութեան իւրայատուկ ձեւ, որի նպատակն աշխարհի մասին օբյեկտիւ, համակարգայնօրէն կազմակերպուած և հիմնաւորուած գիտելիքի մշակումն է: ...Գիտութիւնը նպատակադրւում է ի ցոյց հանել օրէնքներ, որոնց համապատասխանութեամբ, օբյեկտները կը ձեւայնանան մարդկային գործունէութեան մէջ»[52]: *Իսկ* «օրէնք»-*ի ներքոյ պէտք է հասկանալ այն, ինչն* «...իրենում արտայայտում է մեր գիտակցութիւնից անկախ այն փաստը, որ շրջակայ աշխարհի իրերն ու երեւոյթները գործառնում և զարգանում են համապատասխան իրենց յատուկ գոյութեանը՝ անհրաժեշտ, կրկնուող, կայուն յարաբերութիւններով (կապերով): Օրէնքի կարեւորագոյն յատկանիշներն են՝ անհրաժեշտութիւնը, համընդհանրութիւնը, կրկնելիութիւնն ու ինվարիանտութիւնը»[53]: *Այսինքն՝ գիտութիւնը նպատակադրւում է ի ցոյց հանել այնպիսի բանաձեւեր, որոնք արձանագրում են աշխարհի իրերի և երեւոյթների անհրաժեշտ, կրկնուող, կայուն կապերը, որոնք տեղի են ունենում անհրաժեշտաբար, համընդհանուր են, կրկնելի և ինվարիանտ:*

Հասկանալի է, որ գիտութիւնը ճանաչողութեան միակ ձեւը չէ, և չի էլ կարող գործառնել զուտ՝ միայն ինքնին կերպով: Այն հանդէս է գալիս շաղկապուած հոգեկանի բոլոր գործընթացների և իրողութիւնների հետ միասին, որոնցից որոշների կամ սրանց որոշ մասերի ուղղակի կապը մեծ ազդեցութիւն ունի գիտութեան իրականացման և գիտական գործընթացների վրայ:

Գիտութեան սոցիոլոգ և փիլիսոփայ Թոմաս Շմուէլ Կունը գիտութեան իրականացման ողջ ընթացքը բացատրում է գիտական յեղափոխութիւնների տեսութեան միջոցով: Ներկայ ուսումնասիրութեան շրջանակներից դուրս է այնպիսի մի շարք հարցերի անդրադառնալը, ինչպիսիք են գիտակարգի (գիտութեան) և յարացոյցի յարաբերութիւնները, գիտակարգի ձեւայնացման գործընթացը յարացոյցի ներսում, նոր յարացոյցի ի յայտ գալը, և նմանատիպ այլ հայեցակէտեր, որոնք կենտրոնական դեր ունեն Թ. Կունի տեսութեան մէջ: Սակայն մեր թեմային սերտօրէն առնչւում է այս հիմնարար հայեցակարգում նոր ծնունդ և կենսագրութիւն ստացած «յարացոյց» *(պարադիգմայ) հայեցակէտը:*

Ըստ Կունի, ամէն գիտութեան գիտակարգային մատրիցան՝ յարացոյցը, համընդհանրական նմոյշը[54]*, որի շրջանակներում գործառնում է* «նորմալ գիտութիւնը», *բաղկացած է չորսից աւելի*[55] *տարրերից.* «նշանային ընդհանրականներ», «մետաֆիզիկական յարացոյց», «արժէք», «նմոյշ»:

Նշանային ընդհանրականները արտայայտւում են նշանների և / կամ բառերի միջոցով, ու համընդհանուր ընդունելութիւն գտնում գիտնականների համայնքում: Սրանք իրականացնում են երկու գործառոյթ. առաջին՝ գիտնականները սրանց օգնութեամբ կառուցում և կիրառում են տրամաբանական ու մաթեմատիկական հասկացութային ապարատներ: Իսկ երկրորդ գործառոյթը՝ «...ոչ միայն օրէնքների դերում հանդէս գալն է, այլ նաեւ որոշ սիմվոլների որոշարկումը, որոնք դրանք պարունակում են»[56]:

Գիտակարգային (դիսցիպլինար) մատրիցայի երկրորդ տարրը մետաֆիզիկական յարացոյցն է կամ յարացոյցի մետաֆիզիկական մասերը: «Այստեղ ես,- *գրում է Կունը,-* ի նկատի ունեմ համընդհանուր ընդունելութիւն գտած վերագրութիւններ, օրինակ՝ ջերմութիւնը մարմնի մասնիկների կինետիկ էներգիան է...»: *Այս* «...վերագրումների

[51] **De Cruz**, **Helen**, "Religion and Science", The Stanford Encyclopedia of Philosophy (Spring 2017 Edition), First published Tue Jan 17, 2017, 1.2.

[52] **Степин В.С.,** Наука, Всемирная Энциклопедия Философия, Москва - Минск, 2001, с. 673.

[53] **Самущик Т. В,** Закон, Всемирная Энциклопедия Философия, Москва - Минск, 2001, с. 358.

[54] Տե՛ս, Кун Томас Структура Научных Революций, Москва, 2003, էջ 441:

[55] Տե՛ս, նույն տեղում, էջ 440:

[56] Նույն տեղում, էջ 235:

պատճառով փոփոխում է հայեցակարգային մոդելի սպեկտորը՝ սկսած յայտածական (էվրիստիկական), վերջացրած գոյաբանական մոդելներով...»: *Այս մոդելները,* «Ի թիւս այլնի, գիտական հանրութեանը մատակարարում են նախընտրելիութիւններ և փոխաբերութիւններ»: *Այս ամէնը գիտնականներին* «...օգնում է որոշակիացնել, թէ ի՛նչը պէտք է ընդունուի՝ որպէս գլուխկոտրուկի լուծում և որպէս բացատրութիւն»[57]:

Գիտակարգային մատրիցայի երրորդ տարրն արժէքն է: «Զնայեած սրանք գործառնում են մշտապէս,- *պնդում է Թոմաս Կունը՝ մեկնաբանելով* «արժէք» *հայեցակէտը,*- սակայն դրանց իւրայատուկ կարեւորութիւնը նկատում է այն ժամանակ, երբ այս կամ այն գիտնականների համայնքի անդամներն իրենց գիտութեան ոլորտում հարկադրուած են՝ ի յայտ բերելու ճգնաժամ կամ, յետագայում, ընտրել ուսումնասիրութեան անհամատեղելի ճանապարհներից մէկը: Արժէքի առաւել արմատականացումը վերաբերում է կանխասացմանը. դրանք պէտք է լինեն ճշգրիտ, քանակական, ...»[58]: «Գոյութիւն ունեն արժէքների տեսակներ, օրինակ, այն տեսակէտը, որ գիտութիւնը պէտք է (կամ պէտք չէ) օգտակար լինի հասարակութեանը...»[59]:

Արժէքների վերաբերեալ Կունի պնդումներից խիստ յատկանշականն այն է, որ «...ամէն դէպքում՝ արժէքների թանձրացական կիրառութիւնը յաճախ մեծապէս կախուած է անձի իւրայատկութիւնից և կենսագրութիւնից, որոնք տարբերակում են միմեանցից գիտական խմբակի անդամներին»[60]:

Առարկայական մատրիցայի չորրորդ տարրն ամենաէականն է, որովհետեւ Կունը գտնում է, որ սա կարելի էր անուանել հէնց «յարացոյց» (պարադիգմա)*. դա* «...լեզուականօրէն և ինքնակենսագրականօրէն տեղին կը լիներ: Սակայն քանի որ այս հասկացութիւնը,- *շարունակում է Թ. Շ. Կունը,*- արդէն ստացել է իր էութիւնը, ապա այն այստեղ կը փոխարինեմ «նմոյշ» բառով: Այս տեսակի տարրի ներքոյ ես հասկանում եմ, ամենից առաջ, խնդիրների թանձրացական լուծումներ, որոնց հետ բախւում են ուսանողները՝ գիտական պատրաստութեան հէնց սկզբից՝ լաբարատորիաներում, քննութիւնների ժամանակ, կամ ուսումնական ձեռնարկների ...վերջում»: «Նմոյշների համակարգերի մեջտեղ եղած տարբերութիւնը, առաւել քան միւս տեսակի տարրերը, որոնք բաղադրում են գիտակարգային մատրիցան, որոշակիացնում են գիտական գիտելիքի նուրբ կառուցուածքը: Օրինակ՝ բոլոր ֆիզիկոսները սկսում են միեւնոյն նմոյշներից...»[61]:

Ինչպէս տեսանք, ըստ Թ. Շ. Կունի, գիտութիւնը ընդհանրապէս, կամ մէկ մասնաւոր գիտակարգը միշտ շրջապատուած է արտագիտական մի շարք իրողութիւններով, որոնք կա՛մ նախորդում են գիտական տեսութեանը, կա՛մ՝ յաջորդում, կա՛մ՝ ուղեկցում, և կամ էլ՝ բոլորը միասին: Այդ արտագիտական իրողութիւնները, որոնք մտնում են նշանային ընդհանրականների, մետաֆիզիկական յարացոյցի, արժէքի և կամ նմուշի հայեցակէտերի մէջ, կարող են լինել ռացիոնալ, զգայական, իռացիոնալ, բնազդային, գիտակցական, անգիտակցական, հայեցողական, կենցաղային, և այլն: Սրանց ցանկացած համադրական ամբողջը, իր հերթին, խմբային մակարդակում, միշտ ինչոր մշակոյթի և կամ ենթամշակոյթի ազդեցութեան տակ է, այդ թուում նաեւ՝ մոդայի: Անձի մակարդակում, այս ամենից զատ, առկայ են նաեւ խառնուածքի, բնաւորութեան, դաստիարակութեան և նեղ-անմիջական միջավայրի գործօնները, և այլն:

Քանի որ վերը բաւարար չափով յայտածուեց գիտութեան և կրօնի էական յատկութիւնները, ապա կարելի է կատարել որոշակի համադրում-հարցադրումներ: Արդեօք գիտութիւնն ընդհանրապէս կարո՞ղ է բախուել կրօնի հետ, եթէ աշխարհի առաջանալը մէկանգամեայ պատահոյթ է, իսկ գիտութիւնը (ինչպէս վերը հիմնաւորուեց) ուսումնասիրում է «...աշխարհի իրերի և երեւոյթների անհրաժեշտ, կրկնուող, կայուն

[57] Նոյն տեղում, էջ 237:

[58] Նոյն տեղում:

[59] Նոյն տեղում, էջ 238:

[60] Նոյն տեղում:

[61] Նոյն տեղում, էջ 240:

կապերը, որոնք տեղի են ունենում անհրաժեշտաբար, համընդհանուր են, կրկնելի և ինվարիանտ»: *Ակնյայտ է՝ ո՛չ։*

Գիտութեամբ զբաղուող անձը կարո՞ղ է արդեօք փնտրել և իր նախագիտական համակարգում կաղապարել գիտական որոշ տուեալներ, որոնք ճշմարտութեան միեւնոյն արժէքը կունենան, եթէ տուեալ գիտնականն ունենար լիովին հակադիր նախագիտական համակարգ։ Այո՛։

Ուրեմն գիտական տուեալը, մասնաւոր գիտակարգը, և գիտութիւնն ընդհանրապէս, սկզբունքօրէն չի կարող բախուել կրօնի հետ։ Կրօնի հետ բախւում է գիտնականի՝ նախքան գիտութեան տրուածութիւնը՝ յարացոյցը, որը ծառայում է որպէս հիմք՝ մեկնաբանելու և կաղապարելու համար ամէն հնարաւոր գիտական տուեալ։ Ուրեմն գիտնականը իր կանխակալ մօտեցմամբ է, որ «կարողանում» *է ստեղծել բախում գիտական տուեալի և կրօնական պնդման միջեւ. մի իրողութիւն, որ զուրկ է ամէն տեսակ տրամաբանական հիմքից։*

Գիտութեան էութէնական հիմնախնդիրներին միայն Թ. Շ. Կունը չէ, որ անդրադարձել է, սակայն այն նկատառումով, որով վերը քննարկուեց Կունի տեսութիւնը, մեր կատարած եզրակացութիւններին կը համաձայնեն նաեւ Կ. Պոպպերի, Պ. Ֆեյրաբենդի, Ի. Լակատոշի, Լ. Լաուդանի, և այլ խոշոր էպիստեմոլոգների տեսութիւններ նոյնպէս։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կրօն-գիտութիւն հակամարտային մոդելը, ռացիոնալ տեսանկիւնից, կեղծ է, իսկ կրօնական պնդման և գիտական տուեալի բոլոր տեսակի բախումները՝ ոչ լեգիտիմ։ Իսկ այն փաստը, որ ներկայումս բազմաթիւ բանավէճերում հնարաւոր է դառնում իրականացնել այս մտացածին բախումը, ծագում է նրանից, որ կամ կրօնին մօտենում են որպէս մասնաւոր գիտակարգի, կամ՝ գիտակարգին (գիտութեանը) մօտենում են որպէս կրօն, կամ էլ՝ երկուսը միասին։

Վերջապէս՝ և՛ այն գիտնականները, որոնք դրական կարծիք են յայտնել կրօնական ինչ-ինչ դրոյթների մասին, և՛ նրանք, որ հակադրուել են կրօնին, հիմնաւորուած, տրամաբանօրէն ճշգրիտ և անհրաժեշտաբար չէ, որ յանգել են եզրայանգմանը՝ ելակէտուելով իրենց նեղ-մասնագիտական գործունէութեան արդիւնքներից. նրանց կարծիքներն այս հարցում նոյնքան վաւերականութիւն ունեն, որքան ոչ մտաւորական գործունէութեամբ զբաղուող անձանց կարծիքները։

Ուստի աթեիստը, որը վկայակոչում է գիտութիւնը՝ հերքելու համար կրօնական ինչ-որ պնդում, թոյլ է տալիս տրամաբանական կոպիտ սխալ, և հէնց շեմից, հակասում ինքն իրեն։

Գ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԿՐՕՆԻ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Ամփոփում

Յօդուածում քննարկւում է կրօնի և գիտութեան ռացիոնալ հակամարտութեան լեգիտիմութեան հարցը: Յայտածելով կրօնի և գիտութեան կառուցուածքային տարրերը, գտնում ենք, որ հոգեւոր մշակոյթի այս երկու ձեւերի հակամարտութիւնը մտացածին է և զուրկ ռացիոնալ հիմնաւորումից, հետեւաբար կրօն-գիտութիւն հակամարտային մոդելից արտածուող բոլոր խնդիրները, բանական տեսանկիւնից, կեղծ են:

G. HAKOBYAN

ON THE PROBLEM OF THE CONFLICT BETWEEN RELIGION AND SCIENCE

Summary

The article deals with the problem of the rational legitimacy of the conflict between religion and science. In exploring the structural elements of religion and science, we find that the conflict between these two forms of spiritual culture is fictitious and has no rational justification; therefore all the questions that are derived from the conflict of the religion-science model are false.